ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-327-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» «07» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1224-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005.Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակներում «1channel fest» փառատոն» («ՖեստիՎառ») նախագծի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «1channel fest» փառատոն» («ՖեստիՎառ») նախագիծը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով

թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.8. որոշմամբ հատկացված գումարներով ձեռք բերված գույքը/ հիմնական միջոցները սեփականության իրավունքով տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,
2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,
2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,
2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,
2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,
2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,
2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,
2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,
2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի

հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 179954,3 հազար (հարյուր յոթանասունինը միլիոն ինը հարյուր հիսունունչորս հազար երեք հարյուր) դրամ՝

(ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը կազմակերպությանը հատկացվում է փուլերով՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

1-ին փուլ՝ սույն պայմանագրի կնքումից հետո՝ 52076,0 հազար դրամ,

2-րդ փուլ՝ հավելված 2-ով նախատեսված 1-ին միջոցառման բովանդակային հաշվետվությունը ներկայացնելուց հետո (30.07.2023թ.)՝ 29560,0 հազար դրամ,

3-րդ փուլ՝ հավելված 2-ով նախատեսված 2-րդ միջոցառման բովանդակային հաշվետվությունը ներկայացնելուց հետո (20.08.2023թ.)՝ 31288,0 հազար դրամ,

4-րդ փուլ՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 67030,3 հազար դրամ:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. օգոստոսի 27-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հուլիսի 13-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր

պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
Կառավարական տուն N 2	Հ/Հ 2050022082671001, հվհհ 01540062
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հեռ. 093072266, 098018834
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	Գործադիր տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	_____ Հ. Մովսիսյան
_____ Հ. Հակոբյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ. Տ.
Կ. Տ.	

Հավելված N 1
«26» «07» 2023 թ.
N ՄՇԴ-327-2023 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր

«1channel fest» փառատոն» («Ֆեստի Վառ») նախագծի

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
3	Ծրագրի անվանում	«1channel fest» փառատոն» («ՖեստիՎառ»)
3.1	Բովանդակություն	Առաջին ալիքը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում կազմակերպում է երաժշտական մեծ փառատոն: Փառատոնի բրենդավորման հիմքում Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավն է, որի ստեղծման 100-ամյակը լրանում է այս տարի: «ՖԵՍՏԻՎԱՌ»-ի հյուրերը Վանաձորում, Գավառում և Սիսիանում հնարավորություն կունենան համտեսել տեղական արտադրանքը, այցելել թաքնված ու հայտնի անկյունները և վայելել համերգային ծրագիրը:
3.2	Նպատակ	Փառատոնի նպատակը մշակութային միջոցառումների ապակենտրոնացումն է, մարզերում զբոսաշրջային ակտիվության խթանումը և տեղի արտադրողների հանրահռչակումը:
3.3	Անցկացման ժամկետ	2023 թ. Հուլիս 22 Օգոստոս 12 Օգոստոս 26
3.4	Անցկացման վայր	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան

3.5	Ակնկալվող արդյունքներ	Փառատոնի իրականացման արդյունքում ակնկալվում է համայնքային կյանքի աշխուժացում, զբոսաշրջային հոսքերի ներգրավում մարզերում, տեղական արտադրանքի վերաբերյալ իրազեկացվածության բարձրացրում, ՓՄՁ գործունեության խթանում, նոր գործարար կապերի հաստատում:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	3 համերգ 4 000 հանդիսատես

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
Հ/Հ 2050022082671001, հվհհ 01540062
Հեռ. 093072266, 098018834
Գործադիր տնօրեն՝
_____ Հ. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«26» «07» 2023 թ.
N ՄՇԴ-327-2023 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՀՀ մարզերում «1channel fest» («ՖեստիՎառ») փառատոնի կազմակերպման ծախսերի

I. Համերգային նախագիծ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում

22 հուլիսի 2023 թ.

NN	Ծախսատեսակների անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Գեղարվեստա-ստեղծագործական անձնակազմի ծառայություններ**				**15,260.0**
	Սիմֆոնիկ երաժշտախմբի ապահովում (ներառյալ նոտագրման, երաժշտական գործիքների վարձակալության, երաժշտախմբի ու գործիքների տեղափոխման տրանսպորտային ծախսեր)	հատ	1	6,110,000	6,110.0
	«Ռեինկարնացիա» երաժշտախումբի ապահովում (ներառյալ տրանսպորտային ծախսեր)	հատ	1	4,350,000	4,350.0
	Երգիչների ելույթի վարձատրություն	հատ	2	400,000	800.0
	Համերգի փորձերին երգիչների վարձատրություն և տրանսպորտի ապահովում	հատ	2	450,000	900.0
	Ցերեկային ծրագրի երաժշտախումբ (ներառյալ տրանսպորտային ծախսեր)	հատ	1	500,000	500.0
	Համերգային ծրագրի հաղորդավար	հատ	2	300,000	600.0
	Ցերեկային ծրագրի հաղորդավար	հատ	1	250,000	250.0
	DJ ծառայություն (ներառյալ տեղափոխման գծով տրանսպորտային ծախսեր)	հատ	1	350,000	350.0
	Պրոդյուսերի վարձատրություն	հատ	1	400,000	400.0
	Պրոդյուսերական նախապատրաստական աշխատանքների վարձատրություն	հատ	1	200,000	200.0
	Ադմինիստրատիվ անձնակազմ	հատ	1	800,000	800.0
2	**LED էկրանի, լուսաձայնային սարքավորումների, կոնստրուկցիաների, համերգային բեմերի ապահովման, սպասարկման, տեղափոխման, տեխնիկական սպասարկող անձնակազմի կեցության ծառայություններ**	հատ			**34,145.0**
2.1	**LED էկրան** ԼԵԴ էկրան (240 քմ), Gloshine 4մմ կետայնությամբ, մոդուլի չափերը 1մx0.50սմ, 0,50 քմ, կառավարման համակարգ ու արտաքին սարքեր	հատ	1	5,712,000	**5,712.0**

2.2	**Ձայնային սարքավորումներ** Բարձրախոս՝ Adamson S10 - 24 հատ, Adamson SB118 - 12 հատ, Fidek FMS 115 - 24 հատ, Խոսափող՝ Remic - 48 հատ, DPA - 24 հատ, SM58 - 6 հատ, Ձայնի կառավարման համակարգ՝ Alen&Heat DliveS5000 - 1 հատ	հատ	1	4,683,000	**4,683.0**
2.3	**Լուսային սարքավորումներ** Լեդ լուսատու սարք՝ FineArt Fine 1519 Pixie - 52 հատ, Լեդ լուսատու սարք՝ FineArt Fine 2000L BSWF - 42 հատ, Լուսատու սարք՝ FineArt Fine 440 BSW - 36 հատ, Լուսատու սարք՝ FineArt Fine 330 Xtream - 30 հատ, Լեդ լուսատու սարք՝ PR lighting Xled 2007 - 52 հատ, Լեդ լուսատու սարք՝ PR lighting Led Bar 1430 - 60 հատ, Լուսատու սարք՝ Stage Blinder 2 light - 24 հատ, Լույսերի կառավարման համակար՝ գ MA lighting MA2 Full - 1 հատ, Լույսերի կառավարման համակարգ՝ MA lighting MA2 NPU - 2 հատ	հատ	1	7,726,950	**7,727.0**
2.4	**Ալյումինե կոնստրուկցիաներ** Մետաղական հյուսվածքներով կոնստրուկցիա՝ Layher (9*10)*2, (17*10), Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով. և բեմահարթակով՝ չափերը 16.80x13,80 MDM, Մետաղական շղթայով էլեկտրական ամբարձիչներ - 20 հատ	հատ	1	11,371,500	**11,371.5**
2.5	**2-րդ համերգային բեմ** Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով, 6x4x6, Բեմի մոդուլներ 1մx2մ, 2 քմ - 24 հատ, Ձայնային համակարգ փոքր բեմի համար - 1 կոմպլեկտ, Լեդ էկրան փոքր բեմի ետնամասում ամրացնելու համար - 48 քմ	հատ	1	3,234,000	**3,234.0**
2.6	Տեխնիկական սպասարկող անձնակազմի ու տեխնիկական սարքավորումների տեղափոխում, գիշերակացի ու սննդի ապահովում՝ միջինը՝ մինչև 12 անձ, 4 օրվա կտրվածքով	հատ	1	1,417,500	**1,417.5**
3	**Նկարահանման տեխնիկայի ապահովման ծառայություն** Ֆոտոտեսախցիկ (ներառյալ օբյեկտիվ)՝ 15 հատ, եռոտանի՝ 13 հատ, հեռուստատեսային ռելս՝ 1 հատ, ռոնին՝ 2 հատ, կռունկ՝ 1հատ, նկարահանող սարք «Սարդ» 1հատ, մոնիտոր՝ 10 հատ	հատ	1	1,300,000	**1,300.0**
4	**LED էկրաններին ցուցադրելու համար թեմատիկ կոնտենտի պատրաստման ծառայություն**	հատ	1	750,000	**750.0**
5	**Բրենդավորման ծառայություն** (բեմի բաներներով ու սև կտորով քողարկման համար, 3 համերգների համար)	հատ	1	7,500,000	**7,500.0**
6	**Հյուրանոցային ծառայություն սիմֆոնիկ նվագախմբի, երաժշտախմբի ու տեխնիկական անձնակազմի համար** (100 մարդ, 1 օր)	հատ	1	1,000,000	**1,000.0**
7	**Սննդի ապահովման ծառայություն սիմֆոնիկ նվագախմբի, երաժշտախմբի ու տեխնիկական անձնակազմի համար** (միջին 100 մարդ, 2 օր)	հատ	1	1,000,000	**1,000.0**

8	**Վրանների վարձակալություն** (մոնտաժում, ապամոնտաժում, տեղափոխում) բացվածքը 3մx3մ, քիվի բարձրություն 2,3մ, կտուրի բարձրությունը մինչև 4,12մ	հատ	32	79,375	**2,540.0**
9	**Այլ չնախատեսված ծախսեր**				**1,600.0**
ԸՆԴԱՄԵՆԸ					**65,095.0**

II. Համերգային նախագիծ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում
12 օգոստոսի 2023 թ.

NN	Ծախսատեսակների անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Գեղարվեստա-ստեղծագործական անձնակազմի ծառայություններ**				**12,250.0**
	Երաժշտախումբ	հատ	1	2,500,000	2,500.0
	Երգիչների ելույթի վարձատրություն	հատ	7	400,000	2,800.0
	Համերգի փորձերին երգիչների վարձատրություն և տրանսպորտի ապահովում	հատ	7	400,000	2,800.0
	Համերգային ծրագրի հաղորդավար	հատ	2	300,000	600.0
	Ցերեկային ծրագրի հաղորդավար	հատ	1	250,000	250.0
	DJ ծառայություն	հատ	1	300,000	300.0
	Ցերեկային համերգի երաժշտախումբ	հատ	2	1,000,000	2,000.0
	Ադմինիստրատիվ անձնակազմ	հատ	1	1,000,000	1,000.0
2	**LED էկրանի, լուսաձայնային սարքավորումների, կոնստրուկցիաների, բեմի ապահովման, սպասարկման, տեղափոխման, տեխնիկական սպասարկող անձնակազմի կեցության ծառայություններ**				**17,710.0**
2.1	**ԼԵԴ էկրան (164 քմ)** Gloshine 4մմ կետայնությամբ, մոդուլի չափերը 1մx0.50սմ, 0,50 քմ, կառավարման համակարգ, արտաքին սարքեր	հատ	1	3,965,000	3,965.0
2.2	**Ձայնային սարքավորումներ** Բարձրախոս՝ Adamson S10 - 24 հատ, Adamson SB118 - 12 հատ, Fidek FMS 115 - 24 հատ, Խոսափող՝ հարվածային, փողային և փայտափողային գործիքների, մենակատարի և ձայնակցողների համար՝ 36 հատ, Ձայնի կառավարման համակարգ Alen&Heat DliveS5000 - 1 հատ	հատ	1	3,925,000	**3,925.0**
2.3	**Լուսային սարքավորումներ** Լեդ լուսատու սարք FineArt Fine 1519 Pixie - 52 հատ, Լեդ լուսատու սարք PR lighting Xled 2007 - 30 հատ, Լուսատու սարք FineArt Fine 440 BSW - 16 հատ, Լուսատու սարք FineArt Fine 330 Xtream - 30 հատ, Լեդ լուսատու սարք PR lighting Led Bar 1430 - 9 հատ, Լույսերի կառավարման համակարգ Avolites Quartz - 1 հատ, Լույսերի կառավարման համակարգ ArtNet gate - 1 հատ	հատ	1	3,140,000	**3,140.0**

2.4	**Ալյումինե կոնստրուկցիաներ** Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով. և բեմահարդակով չափերը 15x13 ICTC, Մետաղական շղթայով էլեկտրական ամբարձիչներ - 14 հատ, Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով. կառավարման տաղավարի համար չափերը 10x3, Մետաղական կոնստրուկցիա (Layher) 8x2x8 - 2 հատ	հատ	1	5,430,000	**5,430.0**
2.5	Տեխնիկական սպասարկող անձնակազմի ու տեխնիկական սարքավորումների տեղափոխում, գիշերակացի ու սննդի ապահովում՝ միջինը՝ մինչև 12 անձ, 4 օրվա կտրվածքով	հատ	1	1,250,000	**1,250.0**
3	**Նկարահանման տեխնիկայի ապահովման ծառայություն** Ֆոտոտեսախցիկ (ներառյալ օբյեկտիվ)՝ 15 հատ, եռոտանի՝ 13 հատ, հեռուստատեսային ռելս՝ 1 հատ, ռոնին՝ 2 հատ, կռունկ՝ 1 հատ, նկարահանող սարք «Սարդ»՝ 1 հատ, մոնիտոր՝ 10 հատ	հատ	1	1,300,000	**1,300.0**
4	**Երաժշտական գործիքների տեղափոխման ծառայություն**	հատ	1	200,000	**200.0**
5	**LED էկրաններին ցուցադրելու համար թեմատիկ կոնտենտի պատրաստման ծառայություն**	հատ	1	750,000	**750.0**
6	**Տրանսպորտային ծառայություն** (երաժշտախմբի ու երգիչների տեղափոխում)	հատ	1	200,000	**200.0**
7	**Սննդի ապահովման ծառայություն** երաժշտախմբի ու տեխնիկական անձնակազմի համար (25 մարդ, 2 օր)	հատ	1	200,000	**200.0**
8	**Վրանների վարձակալություն** (մոնտաժում, ապամոնտաժում, տեղափոխում) բացվածքը 3մx3մ, քիվի բարձրություն 2,3մ, կտուրի բարձրությունը մինչև 4,12մ	հատ	32	79,375	**2,540.0**
9	**Այլ չնախատեսված ծախսեր**				**1,800.0**
ԸՆԴԱՄԵՆԸ					**36,950.0**

III. Համերգային նախագիծ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում
26 օգոստոսի 2023 թ.

NN	**Ծախսատեսակների անվանումը**	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Գեղարվեստա-ստեղծագործական անձնակազմի ծառայություններ**				**12,850.0**
	Երաժշտախումբ	հատ	1	3,500,000	3,500.0
	Երգիչների ելույթի վարձատրություն	հատ	4	400,000	1,600.0
	Համերգի փորձերին երգիչների վարձատրություն և տրանսպորտի ապահովում	հատ	4	400,000	1,600.0
	Երաժիշտ	հատ	8	250,000	2,000.0
	Համերգային ծրագրի հաղորդավար	հատ	2	300,000	600.0
	Ցերեկային ծրագրի հաղորդավար	հատ	1	250,000	250.0
	DJ ծառայություն	հատ	1	300,000	300.0
	Ցերեկային համերգի երաժշտախումբ	հատ	2	1,000,000	2,000.0

	Ադմինիստրատիվ անձնակազմ	հատ	1	1,000,000	1,000.0
2	**LED էկրանի, լուսաձայնային սարքավորումների, կոնստրուկցիաների, բեմի ապահովման, սպասարկման, տեղափոխման, տեխնիկական սպասարկող անձնակազմի կեցության ծառայություններ**				**17,680.0**
2.1	**ԼԵԴ էկրան (164 քմ),** Gloshine 4մմ կետայնությամբ, մոդուլի չափերը 1մx0.50սմ, 0,50 քմ, կառավարման համակարգ, արտաքին սարքեր	հատ	1	3,965,000	3,965.0
2.2	**Ձայնային սարքավորումներ** Բարձրախոս՝ Adamson S10 - 18 հատ, Adamson SB118 - 12 հատ, Fidek FMS 115 - 28 հատ, Խոսափող՝ հարվածային, փողային և փայտափողային գործիքների, մենակատարի և ձայնակցողների համար՝ 36 հատ, Ձայնի կառավարման համակարգ՝ Alen&Heat DliveS5000 - 1 հատ	հատ	1	3,650,000	**3,650.0**
2.3	**Լուսային սարքավորումներ** Լեդ լուսատու սարք՝ FineArt Fine 1519 Pixie - 45 հատ, Լեդ լուսատու սարք՝ PR lighting Xled 2007 - 30 հատ, Լուսատու սարք՝ FineArt Fine 440 BSW - 11 հատ, Լուսատու սարք՝ FineArt Fine 330 Xtream - 30 հատ, Լույսերի կառավարման համակարգ՝ Avolites Quartz - 1 հատ, Լույսերի կառավարման համակարգ ArtNet gate - 1 հատ	հատ	1	2,800,000	**2,800.0**
2.4	**Ալյումինե կոնստրուկցիաներ** Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով. և բեմահարթակով չափերը 11x9 ICTC, Մետաղական շղթայով էլեկտրական ամբարձիչներ - 12 հատ, Ալյումինե կոնստրուկցիա, ծածկով. կառավարման տաղավարի համար չափերը 10x3, Մետաղական կոնստրուկցիա (Layher) 8x2x8 - 2 հատ	հատ	1	4,715,000	**4,715.0**
2.5	Տեխնիկական սպասարկող անձնակազմի ու տեխնիկական սարքավորումների տեղափոխում, գիշերակացի ու սննդի ապահովում՝ միջինը մինչև 16 անձ, 4 օրվա կտրվածքով	հատ	1	2,550,000	**2,550.0**
3	**Նկարահանման տեխնիկայի ապահովման ծառայություն** Ֆոտոտեսախցիկ (ներառյալ օբյեկտիվ)՝ 15 հատ, եռոտանի՝ 13 հատ, հեռուստատեսային ռելս՝ 1 հատ, ռոնին՝ 2 հատ, կռունկ՝ 1 հատ, նկարահանող սարք «Սարդ»՝ 1 հատ, մոնիտոր՝ 10 հատ	հատ	1	1,300,000	**1,300.0**
4	**Երաժշտական գործիքների տեղափոխման ծառայություն**	հատ	1	200,000	**200.0**
5	**LED էկրաններին ցուցադրելու համար թեմատիկ կոնտենտի պատրաստման ծառայություն**	հատ	1	750,000	**750.0**
6	**Հյուրանոցային ծառայություն երաժշտախմբի ու երգիչների համար** (50 մարդ, 1 օր)	հատ	1	500,000	**500.0**
7	**Սննդի ապահովման ծառայություն երաժշտախմբի ու տեխնիկական անձնակազմի համար** (միջին 50 մարդ, 2 օր)	հատ	1	500,000	**500.0**
8	**Վրանների վարձակալություն** (մոնտաժում, ապամոնտաժում, տեղափոխում) բացվածքը 3մx3մ, քիվի բարձրություն 2,3մ, կտուրի բարձրությունը մինչև 4,12մ	հատ	30	100,000	**3,000.0**
9	**Տրանսպորտային ծառայություն** (երաժշտախմբի ու երգիչների տեղափոխում)	հատ	1	600,000	**600.0**

10	Այլ չնախատեսված ծախսեր				1,730.0
ԸՆԴԱՄԵՆԸ					39,110.0

IY. ՀՀ մարզերում 3 համերգային նախագծերի առաջխաղացման ծախսեր

NN	Ծախսատեսակների անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
	Գովազդային և տպագրական, առաջխաղացման կազմակերպման ծառայություններ				
1	Բիլբորդերի տեղադրում Երևանում և հարակից բանուկ մայրուղիներում, խոշոր մարզկենտրոններում (թվով 10 հատ բիլբորդ Երևանի քաղաքում, թվով 9 հատ՝ Երևանից դուրս), Վանաձոր քաղաքում բիլբորդների տեղադրման նպատակով տպագրական ծախսեր	հատ	1	4,587,000	4587.0
2	Երևան քաղաքի կանգառներում սքրոլլերների տեղադրում՝ 5 կանգառ, յուրաքանչյուրում 2 պաստառ	հատ	1	456,000	456.0
3	Երևանի մետրոպոլիտենի կայարաններում շարժասանդուղքի կողապատին գովազդային պաստառների տպագրություն և տեղադրում՝ 4 կայարան, յուրաքանչյուրում թվով 2 պաստառ	հատ	1	184,000	184.0
4	Ֆլայերների տպագրություն՝ 6 500 հատ	հատ	1	260,000	260.0
5	Ա4 պոստերների տպագրություն՝400 հատ	հատ	1	160,000	160.0
6	Սոցիալական մեդիայում (facebook, instagram, ինֆլուենսերների ու առաջխաղացման անձնակազմի վարձատրություն) առաջխաղացման կազմակերպման ծախսեր	հատ	1	3,160,000	3160.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8807.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ				**149,962.0**
	ԱԱՀ*				**29,992.3**
	ԱՄԲՈՂՋԸ				**179,954.3**

*** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0011
Հ/Հ 2050022082671001, հվհհ 01540062
Հեռ. 093072266, 098018834
Գործադիր տնօրեն՝
Ա. Մովսիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«26» « 07» 2023 թ
N ՄՇԴ-327-2023 պայմանագր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«26» «07» 2023 թ.
N ՄՇԴ-327-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝